



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<19>> Մեյիսիսի 2019թ.
ք. Արմավիր

NՄԿ/158 -2019

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետի 2019 թվականի հունիսի 17-ի N51/2-8-4056-19 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանում 2018 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2019 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում հատկացված սոցիալական օգնությունների հիմքերն ուսումնասիրելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Լ. Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կ. Գրիգորյանին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature



Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2019 թվականի սեպտեմբերի 19-ի
N ՄԿ/ԿՑՑ-2019 կարգադրության

Աշխատանքային խումբ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Լ. Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար.

Անդամներ՝

Գ. Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային
ծառայության հարցերի բաժնի պետ.

Ա. Պողոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման
վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի
գլխավոր մասնագետ :

**Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝**

Վ. Վարդազարյան

